ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» ապրիլի 2024 թվականի N 626

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 7/2 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Հրանտ Ղուկասյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 04042024-07-0202 վկայական) ***ք. Չարենցավան Ս. Շահումյան փողոց 2-րդ փակուղի թիվ 7/2*** հասցեում գտնվող 24.7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 24 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Հրանտ Ղուկասյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3 ***Հրանտ Ղուկասյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 49000 (քառասունինը հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 109000 (մեկ հարյուր ինը հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում ***Հրանտ Ղուկասյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Հրանտ Ղուկասյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» ապրիլի 2024 թվականի N 625

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 14 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Տաթևիկ Սարիբեկյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 26032024-07-0175 վկայական) ***ք. Չարենցավան Վ. Տերյան փողոց 1–ին փակուղի թիվ 14*** հասցեում գտնվող 39.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 21.76 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Տաթևիկ Սարիբեկյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Տաթևիկ Սարիբեկյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 78000 (յոթանասունութ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 97000 (իննսունյոթ հազար) դրամ՝ ղամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Տաթևիկ Սարիբեկյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Տաթևիկ Սարիբեկյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«10» ապրիլի 2024 թվականի N 623
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Սարգսյան	Ֆլորա	015542764	30,000	դրամ
Տոնոյան	Հեղինե	AV0532091	30,000	դրամ
Հարությունյան	Ալվինա	004480026	30,000	դրամ
Սիմոնյան	Գայանե	AR0690612	25,000	դրամ
Մարգարյան	Սոֆիկ	AP0659418	25,000	դրամ
Ղարախանյան	Ռոզիկ	005139357	10,000	դրամ
Նալթակյան	Սեդա	AV0672826	10,000	դրամ
Հակոբյան	Մարինա	007881675	10,000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» ապրիլի 2024 թվականի N 622

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Աղվերան Արարատ Ռեզորթ» ՍՊԸ-ի տնօրեն Վադիմ Հարությունյանը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Արզական Անտառային 11 հասցեում գտնվող 350քմ մակերեսով հյուրանոցային համալիրում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N1736/12 առ 2024 թվականի ապրիլի 10-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N000242 անդորրագրի դիմումատուն 2024 թվականի երկրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 8-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Աղվերան Արարատ Ռեզորթ» ՍՊԸ-ին*** 2024 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Արզական Անտառային 11 հասցեում գտնվող հյուրանոցային համալիրում, իրականացնելու հանրային սննդի կազմակերպում և իրացում (Վկայական N136):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման,եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ.Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» ապրիլի 2024 թվականի N 621

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Աղվերան Արարատ Ռեզորթ» ՍՊԸ-ի տնօրեն Վադիմ Հարությունյանը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Արզական Անտառային 11 հասցեում գտնվող 42քմ մակերեսով հյուրանոցային համալիրում, ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N1735/12 առ 2024 թվականի ապրիլի 10-ի):
Հաշվի առնելով, որ ըստ N000243 անդորրագրի դիմումատուն 2024 թվականի երկրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 8-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***
1. ***«Աղվերան Արարատ Ռեզորթ» ՍՊԸ-ին*** 2024 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Արզական Անտառային 11 հասցեում գտնվող հյուրանոցային համալիրում, իրականացնելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում (Վկայական N235):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» ապրիլի 2024 թվականի N 620

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՊԱՎԵԼ ԲԱԼԲԱԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 10-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Պ. Բալբաբյանի 2024 թվականի ապրիլի 02-ի թիվ 1637/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական ժառանգության իրավունքով Պավել Բալբաբյանին պատկանող ք. Չարենցավան 10–րդ թաղամաս 2–րդ փողոց թիվ 14 հասցեում գտնվող 0.08444 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 155.6 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ համաձայն հատակագծի և «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023BPEXSJ ծածկագրի:
2. Օրինական ճանաչված շինությունների համար 30-օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին վճարել 261000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» ապրիլի 2024 թվականի N 619

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼ ՎԱՀԵ ՂԱՎԱԼՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ 25.01.2024Թ. ԹԻՎ 04 ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ 21.03.2024Թ. ԹԻՎ 20 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Վ. Ղավալյանի 2024 թվականի ապրիլի 04-ի թիվ 1644/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ուժը կորցրած ճանաչել Վահե Ղավալյանին կառուցապատման իրավունքով տրամադրված Չարենցավան համայնք գյուղ Ալափարս Գործարանային թաղամաս 4–րդ փողոց թիվ 4-12 հասցեում բնակելի տուն կառուցելու համար տրված 25.01.2024թ. թիվ 04 ճարտարապետահատակագծային առաջադրանքը և 21.03.2024թ. թիվ 20 շինարարության թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» ապրիլի 2024 թվականի N 618

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13/7 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Վիդոկ Հայրապետյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N [illegible]042024-07-0027 վկայական) ***ք. Չարենցավան 5-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 13/7*** հասցեում գտնվող 54.5 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 32.4 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Վիդոկ Հայրապետյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Վիդոկ Հայրապետյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 108000 (մեկ հարյուր ութ հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 145000 (մեկ հարյուր քառասունհինգ հազար) դրամ՝ հողամասի գինը:

[illegible]. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Վիդոկ Հայրապետյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Վիդոկ Հայրապետյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» ապրիլի 2024 թվականի N 617

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ,ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի <<դ>> կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի մարտի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքում 2024 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանի հաստատման մասին>> N 131-Ա որոշումը՝ Չարենցավան համայնքի տարածքում 2024 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի տարածքում 2024 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Մինչև 2024 թվականի ապրիլի 10-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարարական ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել՝
1) համապատասխան միջոցառումների պլան.
2) տեղեկատվություն համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի:
3) առաջարկություն՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի.
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի օգնական Երեմ Սահակյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Հավելված N 1
Չարենցավան համայնքի ղեկավարի
2024 թվականի ապրիլի 08-ի N617 որոշման

ՊԼԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Կատարող	Կատարման ժամկետ
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	ՈՒսումնասիրել և գնահատել համայնքի տարածքում գտնվող գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքների մասին տեղեկատվություն ներլայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն:	Համայնքի ղեկավար	Մինչև 2024 թվականի ապրիլի 10-ը
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մինչև 2024 թվականի ապրիլի 10-ը
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրաածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մշտական
5.	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարների մակարդակի բարձացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել ակոտայքի մարզային փրկարարական վարչություն:	Մարզի հիդրոօդերևութաբանական ծառայության պետ	Ամեն օր սկսած 2024 թվականի ապրիլի 15-ից
6.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար	Չարենցավանի համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ	Մինչև 2024 թվականի ապրիլի 10-ը
7.	Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջի բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար	Չարենցավան համայնքի քպ բժշկական ծառայության և	Մինչև 2024 թվականի ապրիլի 10-ը

		Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ	
8.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքի ղեկավար	Մինչև 2024 թվականի ապրիլի 10-ը
2. Հիմնական միջոցառումներ			
9.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքի ղեկավար	Մշտական
10.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում
11.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում
12.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքի ղեկավար	Ըստ անհրաժեշտության
13.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ) ջրհեղեղների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում
14.	Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի միջև:	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ», «ՄՏՍ ԱՐՄԵՆԻԱ», «ՅՈՒՔՈՄ», «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի Կոտայքի տարածքային կենտրոնի տնօրեններ	
15.	Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն:	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Գեղամա» մասնաճյուղի տնօրեն	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Հավելված 2
Չարենցավան համայնքի ղեկավարի
2024 թվականի ապրիլի 08-ի N 617 որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Չարենցավան համայնքի հակահեղեղային կառույցների (Կառույցի) հաշվառման

Հ/Հ	Կառույցի տեղեկատվությունը (բնակավայր, գետավազան, վտակ)	Կառույցի տիպը (հեղեղատար, հեղեղակարգավորիչ, բառաժ)	Կառույցի				Կառույցի տեղանքի սեյսմիկության աստիճանը (բալ)	Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել Կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով	Կառույցի տեխնիկական վիճակը (բավարար, անբավարար)
			Երկարությունը (մ)	Լայնությունը (մ)	Խորությունը (մ)	Կողլեզրերի թեքությունը (0)			
1	Չարենցավան Քոչարի փողոց	Հեղեղատար	3500	1-2	1.0	45	8-9	Շենքեր, շինություններ	բավարար
2	Արզական	Հեղեղատար	1200	7-8	1-2	45	7-8	Անհատական բն.տներ և շինություններ	բավարար
3	Ալափարս	Հեղեղատար	1100	2	2.2	90	7-8	Անհատական բն.տներ և շինություններ	բավարար
4	Բջնի գետավազան	Հեղեղատար	2000	6-7	1.0	45	8-9	Անհատական բն.տներ և շինություններ	բավարար
5	Ֆանտան	Հեղեղատար	600	2	1.2	90	8-9	Անհատական բն.տներ և շինություններ	բավարար
6	Կարենիս	Հեղեղատար	700	6	1.4	6	8-9	Անհատական բն.տներ և շինություններ	բավարար

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Հավելված N 3
Չարենցավան համայնքի ղեկավարի 2024 թվականի
ապրիլի 8-ի N 617 որոշման

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Վտանգավոր (աղետի) անվանումները - սելավ - հեղեղում - քարաթափում	Արզական Բջնի
2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրերը	Չարենցավան՝ հեղեղատարների մաքրում: Բջնի բնակավայր՝ սելավատարի հունի մաքրում; Ալափաս բնակավայր՝ սելավատարի մաքրում: Կարենիս բնակավայր՝ սելավատարի մաքրում: Ֆանտան բնակավայր՝ սելավատարի մաքրում:
3. Առաջացման հնարավոր պատճառները	Գարնանային վարարումներ, տևական, հորդառատ տեղումներ, հեղեղատարների և ջրհեռացման համակարգերի խցանում, աղտոտվածություն:
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը:	Ժամանակի ընթացքում սելավների բերած տիղմի նստվածքի առկայություն: Արզականի վերին թաղամասեր, ներքին 150 տուն, 700բնակիչ: Բջնի գյուղամեջ , Ամրոցի ետնամաս, Ս.Սարգիս եկեղեցու ետնամաս, վանքի ձոր, դպրոցի հարակից տարածք, 250 տուն, 1500բնակիչ:
5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկություններ իրականացնելու համար	Հեղեղատարների, գետի, դիտահորերի մաքրում և կարգաբերում, անհրաժեշտության դեպքում պատվարների ամրացում:
6. Համայնքի բյուջեում կամ այլ ծրագրերով 2024 թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների	Անհրաժեշտության դեպքում Հեղեղատարների և դիտահորերի մաքրման, Կարգաբերման և տեղափոխման համար բյուջեից կհատկացվի – 20.0մլն դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«08» ապրիլի 2024 թվականի N 616

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 05-Ի ԹԻՎ 610 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 05-ի « Ավագանու մշտական հանձնաժողովների կազմից իրավասու հանձնաժողով ընտրելու մասին» թիվ 610 որոշման 1.4 ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝

«●/նախագիծ N 34-Ա / Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» ապրիլի 2024 թվականի N 615

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10/2 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Արամայիս Սիմոնյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 29022024-07-0227 վկայական) ***ք. Չարենցավան Հ. Թումանյան փողոց թիվ 10/2*** հասցեում գտնվող 4.43 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը և 4.43 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Արամայիս Սիմոնյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 17721 (տասնյոթ հազար յոթ հարյուր քսանմեկ) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Արամայիս Սիմոնյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 79000 (յոթանասունինը հազար) դրամ՝ առևտրի սրահի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 20000 (քսան հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Արամայիս Սիմոնյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Արամայիս Սիմոնյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» ապրիլի 2024 թվականի N 614

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 6-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/2 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Մանվել Սարիբեկյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 29032024-07-0119 վկայական) ***ք. Չարենցավան 6–րդ թաղամաս 3–րդ փողոց թիվ 4/2*** հասցեում գտնվող 24.8 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 24.8 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Մանվել Սարիբեկյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Մանվել Սարիբեկյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 49000 (քառասունինը հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 111000 (մեկ հարյուր տասնմեկ հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Մանվել Սարիբեկյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Մանվել Սարիբեկյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» ապրիլի 2024 թվականի N 613

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Կ. Եսայանի 2024 թվականի ապրիլի 04-ի թիվ 1666/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Կարեն Եսայանին սեփականության իրավունքով պատկանող **ք. *Չարենցավան Գ. Եսայան փողոց թիվ 5/4 (հողամասի մակերեսը՝ 0.00475 հա/, ք. Չարենցավան Գ. Եսայան փողոց թիվ 5 (հողամասի մակերեսը՝ 0.0047 հա/*** գույքը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել որպես ***ք. Չարենցավան Գ. Եսայան փողոց թիվ 5*** /ընդհանուր մակերեսը՝ 0.00945 հա/:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«08» ապրիլի 2024 թվականի N 612

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ալեքսան Ոսկանի Երիցյան» անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի 4-րդ թաղամաս 7-րդ շենքի հարակից տարածքում գտնվող 15քմ մակերեսով առևտրի օբյեկտում, ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N1702/12 առ 2024 թվականի ապրիլի 08-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 2009 անդորրագրի դիմումատուն 2024 թվականի երկրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 8-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Ալեքսան Ոսկանի Երիցյան»*** անհատ ձեռնարկատերոջը 2024 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի 4-րդ թաղամաս 7-րդ շենքի հարակից տարածքում գտնվող առևտրի օբյեկտում, իրականացնելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք (Վկայական N234):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«05» ապրիլի 2024 թվականի N 611
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Սիմոնյան	Արթուր	011190378	25,000	դրամ
Սիմոնյան	Արմինե	AS0646797	25,000	դրամ
Սահակյան	Արտուրիկ	AL0216339	10,000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» ապրիլի 2024 թվականի N 610

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 12-ին անցկացվելիք երրորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

●/նախագիծ N32-Ա/ Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:

●/նախագիծ N33-Ա/ Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

●/նախագիծ N34-Ա / Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

1.2 Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով՝

● /նախագիծ N35-Ա/ Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

1.3 Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝

● /նախագիծ N 36-Ա/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

●/նախագիծ N37-Ա/Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

●/նախագիծ N38-Ա/ Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող շինությունների զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

●/նախագիծ N39-Ա/ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

• /նախագիծ N40-Ա/ Քաղաքացու անվամբ գրանցված 07-008-0201-0442 կադաստրային ծածկագրով 0,2006 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

1.4. Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ N41-Ա / Չարենցավան համայնքում իրավական հսկողության արդյունքում բացահայտված թերությունների և դրանց վերացման ուղղությամբ տարված աշխատանքների մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**